ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետը, այն է՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք խախտել են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հայաստանի Հանրապետության ՆԳՆ որոշեց.

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետը՝ ՀՀ ՆԳՆ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՆԱՎԱԿ/2023/Հ-54 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն ՀՀ ՆԳՆ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՆԱՎԱԿ/2023/Հ-54 ծածկագրով պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Վաճառողը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հավելեմ, որ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526Ն որոշման կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետը և Պայմանագրի 6.2-րդ կետը, Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման

դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Վաճառողի կողմից ուշացված 107 աշխատանքային օրերի համար հաշվարկվել էր տույժ չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, այն է 1 աշխատանքային օրվա համար 185 000 (հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ, ընդհանուր 19 795 000 (տասնինը միլիոն յոթ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ: «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությանը տրվել էր 10/տաս/ օրացուցային օր սահմանված տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ էր ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով, սակայն վճարումը չի կատարվել սահմանված ժամկետում և վճարման կտրոնը չի ներկայացվել:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՂԵԿԱՎԱՐ՝
ՀՀ ՆԳՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՖԻԴԱՆՅԱՆ**

«30» «07» 2024թ.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
Էյչ Գրուպ ՍՊԸ	***01254973***	***ՀՀ ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30***		**Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի:**		**ՀՀ ՆԳՆ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՆԱՎԱԿ/2023/Հ-54 Պատվիրատուի ղեկավարի « 30 » « 07» 2024թ. որոշման համաձայն**